ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12
վիճակագրության պետական խորհրդի նիստի

---

07.11.2014թ. ժ.11: 00

***Մասնակցում էին՝***

*Ս.Մնացականյան (խորհրդի նախագահ), Գ.Անանյան, Գ.Գևորգյան, Ա.Սաֆյան, Ս.Դավթյան, Լ.Պետրոսյան (խորհրդի անդամներ), Հ. Գրիգորյան (խորհրդի քարտուղար)*

***Հրավիրված էին՝*** *Լ.Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Ա. Հայրապետյան (աշխատակազմի ղեկավար), Վ.Սարոյան (իրավաբանական բաժնի պետ), Դ.Մարտիրոսովա (տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ), Լ. Քալանթարյան (աշխատանքի վիճակագրության բաժնի պետ), Վ. Արևշատյան (բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի պետ), Ա.Դաշյան (բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժին գլխավոր մասնագետ), Դ. Անանյան (տրանսպորտի և կապի վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ), Բ. Ջուլհակյան (շինարարության վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ), Հ. Տիտիզյան (ֆինանսների վիճակագրության բաժնի պետ):*

**Օրակարգի նախագծում յոթ հարց.**

**1.** «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2001-2013 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության անվանազերծված տվյալների բազաները ԵՊՀ մասնագիտական վերապատրաստման բաժնի վարիչ, ծրագրի ղեկավար Վաչե Քալաշյանին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/*

**2.** «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2013 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության անվանազերծված տվյալների բազան Համաշխարհային բանկի սոցիալական պաշտպանության և աշխատանքի բաժնի տնտեսագետ Մաթեո Մորգանդիին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/*

**3.** «2015 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում իրականացվելիք տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության հարցաթերթը և օրագիրը հաստատելու մասին» հարցը:

*Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/*

**4.** «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2009 թվականին տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության և Ասիական զարգացման բանկի RETA 6430 ծրագրի շրջանակներում իրականացված ոչ ֆորմալ զբաղվածության և ոչ ֆորմալ հատվածի հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան Պակիստանի Լահորի կառավարման գիտությունների համալսարանին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Լ.Քալանթարյան/*

**5.** «2014 թվականի երրորդ եռամսյակում ՀՀ ԱՎԾ որակի կառավարման աշխատանքային խմբի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվության մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Վ. Արևշատյան /*

**6.** Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

**6.1.** Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2014 թվականի սեպտեմբերի 22-ից 26-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպած «Մարդահամարների ու կացարանների համատարած հաշվառման» փորձագետների խմբի աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Գ.Գևորգյան/*

**6.2.** Հաղորդում՝ Մոլդովայի Քիշնև քաղաքում 2014 թվականի հոկտեմբերի 13-ից 17-ը «Եվրամիության վիճակագրական ծառայության կողմից կազմակերպված «Կառուցվածքային բիզնես վիճակագրություն» թեմայով դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Ա.Դաշյան, Դ.Անանյան, Բ.Ջուլհակյան/*

**6.3.** Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2014 թվականի հոկտեմբերի 15-ից 17-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի /ՄԱԿ-ի ԵՏՀ, UNECE/ վիճակագրության բաժնի կողմից

կազմակերպված «Մարդկային ռեսուրսների կառավարում և վերապատրաստում /ՄՌԿՎ/» խորագրով աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/*

**6.4.** Հաղորդում՝ Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում 2014 թվականի հոկտեմբերի 21-ից 22-ը Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպած «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ֆինանսների վիճակագրության ցուցանիշների հավաքագրման, մշակման և տարածման մեթատվյալների համակարգի մշակում» թեմայով միջազգային սեմինար-խորհրդակցությանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Հ.Տիփիզյան/*

**7.** Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Քվեարկության արդյունքները-կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

**Լսեցին՝**

**1.** «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2001-2013 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության անվանազերծված տվյալների բազաները ԵՊՀ մասնագիտական վերապատրաստման բաժնի վարիչ, ծրագրի ղեկավար Վաչե Քալաշյանին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/*

**Որոշեցին՝**

թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ ԵՊՀ մասնագիտական վերապատրաստման բաժնի վարիչ, ծրագրի ղեկավար Վաչե Քալաշյանին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2001-2013 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազաները՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**

**2.** «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2013 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության անվանազերծված տվյալների բազան Համաշխարհային բանկի սոցիալական պաշտպանության և աշխատանքի բաժնի տնտեսագետ Մաթեո Մորգանդիին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/*

**Որոշեցին՝**

թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ Համաշխարհային բանկի սոցիալական պաշտպանության և աշխատանքի բաժնի տնտեսագետ Մաթեո Մորգանդիին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2013 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**

**3.** «2015 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում իրականացվելիք տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության հարցաթերթը և օրագիրը հաստատելու մասին» հարցը:

*Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/*

**Որոշեցին՝**

հաստատել 2015 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում իրականացվելիք տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության հարցաթերթը և օրագիրը՝ համաձայն հավելվածի:

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**

**4.** «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2009 թվականին տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության և Ասիական զարգացման բանկի RETA 6430 ծրագրի շրջանակներում իրականացված ոչ ֆորմալ զբաղվածության և ոչ ֆորմալ հատվածի հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան Պակիստանի Լահորի կառավարման գիտությունների համալսարանին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Լ.Քալանթարյան/*

**Որոշեցին՝**

թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնին՝ Պակիստանի Լահորի կառավարման գիտությունների համալսարանին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2009 թվականին տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության և Ասիական զարգացման բանկի RETA 6430 ծրագրի շրջանակներում իրականացված Ոչ ֆորմալ զբաղվածության և ոչ ֆորմալ հատվածի հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**

**5.** «2014 թվականի երրորդ եռամսյակում ՀՀ ԱՎԾ որակի կառավարման աշխատանքային խմբի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվության մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Վ. Արևշատյան /*

**Որոշեցին՝**

ընդունել ի գիտություն «2014 թվականի երրորդ եռամսյակում ՀՀ ԱՎԾ որակի կառավարման աշխատանքային խմբի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը»

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**

**6.** Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

**6.1.** Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2014 թվականի սեպտեմբերի 22-ից 26-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպած «Մարդահամարների ու կացարանների համատարած հաշվառման» փորձագետների խմբի աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Գ.Գևորգյան/*

**6.2.** Հաղորդում՝ Մոլդովայի Քիշնև քաղաքում 2014 թվականի հոկտեմբերի 13-ից 17-ը «Եվրամիության վիճակագրական ծառայության կողմից կազմակերպված «Կառուցվածքային բիզնես վիճակագրություն» թեմայով դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Ա.Դաշյան, Դ.Անանյան, Բ.Զուլհակյան/*

**6.3.** Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2014 թվականի հոկտեմբերի 15-ից 17-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի /ՄԱԿ-ի ԵՏՀ, UNECE/ վիճակագրության բաժնի կողմից կազմակերպված «Մարդկային ռեսուրսների կառավարում և վերապատրաստում /ՄՌԿՎ/» խորագրով աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/*

**6.4.** Հաղորդում՝ Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում 2014 թվականի հոկտեմբերի 21-ից 22-ը Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպած «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ֆինանսների վիճակագրության ցուցանիշների հավաքագրման, մշակման և տարածման մեթատվյալների համակարգի մշակում» թեմայով միջազգային սեմինար-խորհրդակցությանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Հ.Տիտիզյան/*

**Որոշեցին՝**

արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ